Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

Առավոտ
a r a v o t d a i l y
օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ
96/4192/ 24 մայիսի 2012 հինգշաբթի
ISSN 1829-2224

# Ա

## «Անցումային» առասպելը

90-ականների սկզբին Արեւմուտքը մեր նկատմամբ կիրառում էր «անցումային շրջանի երկրներ (հասարակություններ)» բնորոշումը, որն, ըստ էության, ճիշտ էր, բայց իր մեջ մի տեսակ նվաստացուցիչ տարր էր պարունակում: Այսինքն՝ դուք գտնվում եք կապիկի եւ մարդու էվոլյուցիայի կեսճանապարհին, պարզ չէ, թե ինչ է ձեզնից դուրս գալու, եւ այդ պատճառով մենք ձեզ վերաբերվում ենք մեր բարձունքից եկող ներողամտությամբ: 21-րդ դարից սկսած՝ այդ եզրը վերաբերվում է հիմնականում տնտեսությանը (transition economy): Մենք էլ ենք, բնականաբար, այդ շարքում: Բայց դա ավելի նեղ մասնագիտական հասկացություն է, առնչվում է ավելի շուտ միջազգային ֆինանսական կազմակերպությունների գործունեությանը, եւ, իհարկե, հասարակական ինստիտուտների զարգացման աստիճանը ցուցիչը չէ:

Բայց եթե «դրսից» մեր երկիրն այլեւս «անցումային» չեն համարում, ապա մեր իշխանությունները ու որոշ իշխանամետ շրջանակներ դեռեւս կառչած են այդ գաղափարից, բնականաբար՝ իրենց շահերը հետապնդելով: «Չէ, դա չի լինի, մեր ժողովուրդը դեռ չի հասունացել, այս անցումային փուլում դա վտանգավոր է»՝ այդ փաստարկը բերվում է, երբ խոսք է գնում ժողովրդավարության, տնտեսական, խոսքի ազատությունների մասին, մասնավորապես՝ ազատ ընտրություններին: Իհարկե, պաշտոնյաները նման բան ուղիղ տեքստով չեն ասում՝ այդ մտքերն արտաբերվում են ոչ պաշտոնական խոսակցությունների ժամանակ, ինչպես նաեւ իշխանությանը համակրող գործիչների կողմից: Բոլոր դեպքերում, մեր քաղաքացիների «անցումային» բնույթի մասին թեզը լայն շրջանառություն ունի: Բայց ո՞վ է որոշում, թե ինչի համար է ժողովուրդը հասունացել, իսկ ինչի համար՝ ոչ: Ովքե՞ր են այն իմաստունները, որոնք իրենց վրա վերցրել են ժողովրդի մակարդակը չափելու առաքելությունը:

Բերեմ պարզ օրինակ. եթե 10 տարի առաջ «Ա1+»-ը չեթերազրկվեր, եւ եթե այս 10 տարվա ընթացքում եթերում լինեին «վերեւի զանգերից չվախեցող» մի քանի հեռուստաընկերություն (գուցե «Ա1+»-ից լավը), դա կնպաստեր քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, հասարակությանը հուզող խնդիրների ակտիվ ու անկաշկանդ քննարկմանը: Բայց 10 տարի առաջ իշխանությունը որոշեց եւ մինչեւ հիմա էլ կարծում է, որ անցումային փուլում գտնվող ժողովուրդը այդ աստիճանի ազատությանը պատրաստ չէ: Հեռուստաընկերությունը փակած հանձնաժողովականներից մեկը մասնավոր զրույցում լրջորեն բացատրում էր, որ «Ա1+»-ը պիտի եթերում չլինի, որովհետեւ մենք Ղարաբաղի խնդիր ունենք: Իշխանության նման «պետական» մտահոգությունը իրականում զուտ անձնական է՝ հանկարծ եթերում ավել-պակաս չխոսեն:

Հիմա էլ պարզվում է, որ մեր ժողովուրդը պատրաստ չէ մշակութային բազմազանությանը, որովհետեւ իբր դա հայերի կողմից ընկալվում է որպես միասեռականության քարոզ: Իսկ այդ քարոզը, ասում են, ուղղակի հարվածում է մեր ազգային անվտանգությանը: Եվս մի «պետական» մտահոգություն, որը նույնքան կեղծ է: Տվեք մեր քաղաքացիներին բավականաչափ տեղեկատվություն, եւ թող նրանք ինքնուրույն դատեն, թե որն է ճիշտ, որը՝ սխալ: Թե չէ՝ միտումնավոր պահել մարդկանց խավարի մեջ, իսկ հետո բողոքել նրանց խավարամտությունից՝ դա բարոյականության ամենաբարձր դրսեւորումը չէ:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Գեղարվեստի ակադեմիայի ուսանողները փող են հավաքում







Երեկ Հանրապետության հրապարակում Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի մի խումբ ուսանողներ տուփը ձեռքներին շրջում էին ու անցորդներին խնդրում դրամական օգնություն տրամադրել: Հավաքում էին անգամ 10 դրամանոցներ: Բանն այն է, որ ակադեմիայի ուսանողներից մեկը՝ Նելլի Ադամյանը, հիվանդ է լեյկոզով (սպիտակարյունությունը): Նրան տարել են Ռուսաստան: Բուժման համար մեծ գումար է անհրաժեշտ: «Help save Nellins life», «Օգնեք լեյկոզով հիվանդ Նելլիին» պաստառներով Երեւանի փողոցներում շրջող ուսանողները նշում էին, որ հասարակ մարդիկ ավելի շատ են օգնում, քան հարուստները:

Կյանքի համար կռիվ տվող Նելլին չգիտի էլ, որ իր համար ակադեմիայի ուսանողները նման դրամահավաք են կազմակերպել: Ավելին՝ նրան օգնելու համար ակադեմիայի դասախոսական եւ ուսանողական անձնակազմը նաեւ բարեգործական ցուցահանդես-վաճառք է կազմակերպել:

«Նելլիին քիչ ժամանակ է մնացել: Սպիտակարյունությունը շուտ է տարածվում, եթե հիմա չօգնենք՝ ուշ կլինի»,- ասացին ուսանողները:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

Լուսանկարները՝ հեղինակի

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Սաքունցը կարծում է, որ պատասխան պիտի տա նաեւ Շարմազանովը

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար, իրավապաշտպան Արթուր Սաքունցն «Առավոտի» հետ զրույցում անդրադառնալով DIY ակումբի հրկիզմանը՝ բարձրացրեց հարձակման հեղինակներին հովանավորության տակ առնելու փաստը իրավական հարթությունում քննարկելու հարցը. «Քաղաքական ղեկավար անձինք իրենց հայտարարություններով եւ հրապարակումներով, ըստ էության, հրապարակայնորեն աջակցեցին, խրախուսեցին հարձակման հեղինակներին, մինչդեռ ազգային, կրոնական կամ սեռային տեսակետից խտրականությունը, ատելության ու թշնամանքի սերմանումը եւս քրեորեն հետապնդելի արարք է: Այս իմաստով պատասխանատվության պետք է ենթարկվեն նույն ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, պատգամավորներ Արծվիկ Մինասյանն ու նրա գործընկերը»:

Կարդացեք էջ 3:

### Դեմկուսը կձեւավորի նոր խորհրդարան

Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը երեկ հայտարարեց, որ իր նախընտրական խոստումների եւ ծրագրերի իրականացման համար ընտրել է հասարակական խորհրդարան ձեւավորելու ճանապարհը: ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը նշեց. «Մենք եկել ենք այն եզրակացության, որ կուսակցությունը եւս հինգ տարի ձեռքերը ծալած չպետք է նստի եւ սպասի մյուս ընտրություններին: Ուստի հասարակական խորհրդարանի միջոցով մենք պետք է տարբեր խնդիրներում փոփոխություններ առաջարկենք կառավարությանը եւ խորհրդարանին»: Ա. Սարգսյանի կարծիքով՝ այդ կուսակցությունները, որոնք մի կերպ են հայտնվել խորհրդարանում, առանձնապես չեն տարբերվում Դեմկուսից, քանի որ, միեւնույն է, խորհրդարանում չեն կարողանալու իրենց ծրագրերը այդպիսի փոքր ներկայացվածությամբ իրագործել:

Կարդացեք նաեւ՝ էջ 3:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Ուրբաթ» ճամուլի ակումբի հյուրն է Հրայր Կարապետյանը:

### Եղանակ

Երեւան +13 +26, Շիրակ +3 +18, Կոտայք +3 +18, Գեղարքունիք +3 +18, Լոռի +6 +20, Տավուշ +8 +23, Արագածոտն լեռներ +3 +18, Արագածոտն նախալեռն. 10 +25, Արարատ +12 +27, Արմավիր +12 +27, Վայոց Ձոր լեռներ +3 +18, Վայոց Ձոր նախալեռն. +12 +27, Սյունիքի հովիտներ +10 +27, Սյունիքի նախալեռներ +5 +20, Արցախ +9 +23

## Նախագահը՝ գեներալի կազմակերպած խնջույքին



Օրերս Նախագահ Սերժ Սարգսյանը եւ ՀՀԿ-ական վերնախավը մասնակցել են նաեւ ՀՀԿ համամասնական ցուցակում ընդգրկված գեներալ Մանվել Գրիգորյանի եւ նրա Էջմիածնի քաղաքապետ որդու՝ Կարեն Գրիգորյանի կազմակերպած հետընտրական խնջույքին: Այն տեղի է ունեցել Էջմիածին-Զվարթնոց հատվածում գտնվող «Դավիթնոց» ռեստորանում: Խնջույքին մասնակցել են նաեւ մարզի դպրոցների այն տնօրենները, ովքեր եղել են ընտրական հանձնաժողովների նախագահներ եւ ՀՀԿ-ի համար բարձր ձայներ են ապահովել: Ասում են՝ Նախագահը իրեն բավականին անկաշկանդ է պահել, կենացներ է ասել, պարել է, անգամ որոշ տնօրենների հետ առանձնազրույցի է բռնվել:

Խնջույքին ներկա չի եղել Արմավիրի մարզի թիվ 20 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ՀՀԿ-ի կողմից պատգամավոր ընտրված Հրանտ Գրիգորյանը՝ Մանվել Գրիգորյանի եղբորորդին: Վերջիններիս հարաբերությունները դեռ մնում են լարված, չնայած նրանք արդեն միեւնույն քաղաքական դաշտում են: Հիշեցնենք, որ 2008-ի նախագահական ընտրություններից հետո, երբ գեներալ Մանվել Գրիգորյանն առավել կրավորական կեցվածք ընդունեց, իսկ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե գեներալ Մանվելն իր ու ժողովրդի հետ է, Հրանտ Գրիգորյանը հրապարակային հավատարմություն հայտնեց ՀՀԿ-ին, հորեղբորն էլ հրապարակային «դասեր տվեց»:

Իսկ վերջին խորհրդարանական ընտրությունների քարոզարշավային իր այցի ընթացքում Էջմիածնում Նախագահ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց գեներալներ Մանվել Գրիգորյանին ու Սեյրան Սարոյանին, գովեստի խոսքեր ասաց Մանվել Գրիգորյանի քաղաքապետ որդու՝ Կարեն Գրիգորյանի հասցեին:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## Զինված միջադեպ՝ ադրբեջանցի սահմանապահների միջեւ

Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայությունում զինված միջադեպ է տեղի ունեցել զինվորների միջեւ: Ըստ «Ազատություն» ռ/կ-ի՝ 1news.az ինտերնետային պարբերականին հայտնել են, որ Ադրբեջանի՝ Իրանին սահմանակից Իմիշլի շրջանի Բահրամթեփե գյուղի մոտ գտնվող ուղեկալում հայտնաբերվել են սահմանապահ երկու 19-ամյա զինվորների՝ Ռահիբ Ալիեւի եւ Թուրալ Քյազիմզադեի դիակները: Նախնական տվյալներով՝ զինծառայողների միջեւ անձնական կոնֆլիկտի հողի վրա զինված միջադեպ է տեղի ունեցել, նրանցից մեկը սպանել է մյուսին, ապա՝ ինքնասպան եղել:

# «Կարեւոր ընտրություն մարդիկ համարում են Նախագահականը»

## Համոզված է ՀԺԿ փոխնախագահ Գրիգոր Հարությունյանը

«Ես զգում էի՝ ինչպիսի ընտրություններ են լինելու եւ ինչ հետեւանքներ, դրա համար մտածեցի, որ ավելի ճիշտ է լինել ցուցակի վերջում, այլոց հնարավորություն տալ լինել առաջին համարներում»,- Aravot.am-ի հետ զրույցում անդրադառնալով մեր հիշեցմանը, որ ընտրացուցակների կազմման փուլում ասացիք, թե ինքներդ եք խնդրել, որպեսզի Ձեր անունը գրվի ՀԱԿ ցուցակի վերջին համարներում, սակայն այն ժամանակ չպարզաբանեցիք՝ ինչո՞ւ, ասաց ՀԺԿ փոխնախագահ Գրիգոր Հարությունյանը:

Նա գտնում է, որ Հայաստանում ընտրություններ չեղան, եւ ՀԱԿ-ը ոչ թե քիչ ձայն հավաքեց, այլ «Կոնգրեսին քիչ ձայներ թողեցին»: Նա համոզված է, որ նորմալ ընտրությունների պարագայում ՀԱԿ-ը ոչ թե 106 հազար ձայն կհավաքեր, այլ, հաշվի առնելով նաեւ հասարակական տրամադրությունները, առնվազն երեք անգամ շատ ձայն կհավաքեր:

Այն, որ ՀԱԿ-ից հեռացան «Հանրապետություն» եւ Հայաստանի լիբերալ կուսակցությունները, մեր զրուցակիցը չի դիտարկում «մանդատների կռիվ» տեսանկյունից. «Ինչի՞ եք անմիջապես ամեն ինչ նյութականացնում: Մարդիկ որոշում են կայացրել, ես հարգում եմ իրենց որոշումը: Հատկապես «Հանրապետություն» կուսակցության հետ մենք բավականին երկար, դժվարին ճանապարհ ենք անցել: Եվ ես այն կարծիքին չեմ, որ այդտեղ մանդատի խնդիր էր: Նույնն էլ ՀԼԿ-ի հետ կապված: Չէ, պետք չէ նյութականացնել: Մենք բավականին դժվարին պայքար ենք տարել, եւ հաջողվել է, եւ չի հաջողվել... իրենք մեր ընկերներն են, գործընկերները, ճիշտ չէ նյութականացնել»:



Aravot.am-ը հետաքրքրվեց՝ համամի՞տ է Գրիգոր Հարությունյանը ՀԺԿ-ի՝ ՀԱԿ-ի կազմում մնալու որոշման հետ: «Այսօր արդյունավետ ճանապարհը, իմ կարծիքով, այն է, որ պայքարը պետք է շարունակել, եւ շարունակելու ուղին սա է: Վաղն ավելի արդյունավետ ի՞նչ ուղի կլինի, բնականաբար, ՀԺԿ-ն այդ ուղով կգնա»,- ասաց պարոն Հարությունյանը:

Նա նաեւ նորմալ է վերաբերվում ԱԺ աշխատանքները չբոյկոտելու ՀԱԿ-ի որոշմանը եւ դիտարկմանը: Ի՞նչ պետք է անեն խորհրդարանում մի քանի հոգով՝ հարցին հակադարձեց. «20 հոգով ի՞նչ պիտի անեին: Այս տարիների ընթացքում նման իրավիճակներում ինքս մի քանի անգամ հայտնվել եմ. «Արդարություն» դաշինքի կազմում՝ 17 հոգով, «Միասնություն» դաշինքի կազմում, երբ ՀԺԿ-ն 24 հոգի էր: Եթե ԱԺ-ում չկա լուրջ մեծամասնություն՝ 7-ը թե 15-ը, ոչինչ չի փոխում, որովհետեւ ամեն ինչ ի վերջո հանգում է քվեարկության: 7-ն էլ չի կարող քվեարկությամբ ինչ-որ բան փոխել, 17-ն էլ չէր կարողանալու, 27-ն էլ, եւ այս տեսակետից այն հարցերը, որոնք բարձրացնում էին 17 պատգամավորները, կարող են բարձրացնել նաեւ 7-ը: Իհարկե, երբ ավելի մեծ թվով են լինում բոլոր հանձնաժողովներում, աշխատանքն ավելի արդյունավետ է լինում, բայց արդիական քաղաքական հարցեր բարձրացնելու համար դա մեծ նշանակություն չունի: Այդ 7-ին պետք է օգնել, փորձագետների, լուրջ խմբեր են պետք: «Փոքրամասնությունը» որեւէ լուրջ բան չի կարող փոխել: ԱԺ-ն պետք է լինի քաղաքական ամբիոն, որտեղից պետք է բարձրաձայնվեն հասարակությանը հուզող հարցերը, քո ճշմարտացիությունը, դա պետք է զուգակցել նաեւ դրսի պայքարի հետ»:

Aravot.am-ի հարցին՝ նախագահական ընտրություններին քիչ ժամանակ է մնացել, ՀԱԿ-ը միայն ԱԺ ամբիոնի՞ց քաղաքական պայքար պետք է տանի, Գրիգոր Հարությունյանը պատասխանեց. «Բազմիցս ասվել է, եւ որեւէ մեկը դեռ ետ չի կանգնել, որ խորհրդարանական ընտրությունները պետք է լինեն նախագահական ընտրությունների առաջին փուլ, որովհետեւ մեր երկրում, ճիշտ է, խորհրդարանը հզոր լիազորություններ ունի, բայց հասարակության կողմից գերագույն իշխանություն է ընկալվում նախագահի ինստիտուտը: Նաեւ սրանով է պայմանավորված ինչ-որ տեղ, որ փողն այն ընտրություններում շատ լուրջ ազդեցություն ունեցավ: Կարեւոր ընտրություն մարդիկ համարում են Նախագահականը»:

Հարցին՝ իր ներկայիս վիճակով Դուք համարո՞ւմ եք, որ ՀԱԿ-ը կարող է լուրջ մասնակցություն եւ հավակնություն ունենալ նախագահական ընտրություններին, Գրիգոր Հարությունյանը պատասխանեց. «Ես չեմ բացառում: Չի իմացվի՝ ինչ կլինի, ոնց կլինի»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Քիչ ռեսուրս ունեցողը չի կարող մեծ ակնկալիք ունենալ»

Հայաստանի առաջադիմական կոմունիստական կուսակցության առաջնորդ Վազգեն Սաֆարյանը, որը Հայաստանի կոմունիստական կուսակցության համամասնական ցուցակի 2-րդ հորիզոնականում էր, ԱԺ ընտրություններից առաջ լրատվամիջոցներին վստահաբար հայտարարել էր, որ իրենց ընտրազանգվածը առնվազն 10% է, եւ հաստատ այդքան ձայն կհավաքեն: Սակայն ՀԿԿ-ն իր ասած ձայների նույնիսկ կեսը չհավաքեց, այլ ընդամենը 1.5%-ը: Aravot.am-ը երեկ Վազգեն Սաֆարյանից հետաքրքրվեց, թե ինչպե՞ս էին հաշվարկել այդ առնվազն 10%-ը, որն իրականություն չդարձավ: Մեզ հետ զրույցում պարոն Սաֆարյանն ասաց, որ այսօր էլ վստահ է՝ իրենց ընտրազանգվածը 10%-ից պակաս չէ. «Մեր օգտին ֆիքսված ձայները 16 հազարի չափ էին, բայց 53 հազար անվավեր ճանաչված բյուլետեններ կային, որոնցից առնվազն 10 հազարը մեզ՝ կոմունիստներին տված ձայներն են: Եթե հաշվի առնենք, որ այս ընտրություններում մարդկանց շահագրգռել են, տարբեր ճանապարհներով հորդորել են, նրանց մեջ նաեւ, ինչու չէ, մեր ընտրազանգվածն էլ է եղել, ու այն ձայները, որ մենք կարող էինք ակնկալել եւ ստանալ, բնականաբար, չենք ստացել: Այսինքն՝ այս ընտրական մեխանիզմի գործառույթում այդ ձայները ինչ-որ տեղ փոշիացել են, դրա համար մենք կորցրինք մեր այն ընտրազանգվածին, որոնք տուրք տվեցին այդօրինակ գայթակղություններին կամ ճնշումներին»: Այն հարցին էլ՝ արդյոք 10 հազար անվավեր քվեաթերթիկներով կլրացվե՞ր իրենց ակնկալած 10%-ը, պարոն Սաֆարյանն ինչ-որ թվեր ներկայացրեց, հետո գումարում-հանում արեց. «Երեւան քաղաքի 100-ից ավելի ընտրատեղամասերի արդյունքներն ունեմ: Մեր դիտորդներն այդ տեղամասերում ֆիքսել են, որ ամեն տեղամասում 4-5 հատ անվավեր բյուլետեն հօգուտ մեզ է գնացել: Օրինակ՝ սյունակից դուրս է եկել պտիչկայի պոչը, կամ ՀԿԿ-ի դիմաց պտիչկայի տեղը խաչ են դրել, կամ էլ՝ պետք է աջ կողմում նշում անեին, ձախում են արել: Ամբողջ ընտրատեղամասերն իրար հետ՝ առնվազն 10 հազար ձայն այդպես է կորել»: Սրան էլ գումարած, որ կոմունիստների ընտրազանգվածի մի մասն էլ, պարոն Սաֆարյանի խոսքերով, չդիմացան գայթակղությանը եւ տրվեցին հորդորներին, այդ 10%-ը լրացվեց:

Խորհրդարան չանցնելու «մեղքի» մի բաժինն էլ կոմունիստներն իրենց վրա են վերցնում. «Մեր ոչ արդյունավետ աշխատանքն էր, ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, կազմակերպչական որոշակի բացթողումները... Այս մեծ մրցապայքարի մեջ ֆինանսական ռեսուրսները մեծ դերակատարություն ունեն, եւ, բնականաբար, քիչ ռեսուրս ունեցողը չի կարող մեծ ակնկալիք ունենալ»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# «ՕԵԿ-ին չեն անտեսել, հակաքարոզչություն են արել»

Առցանց լրատվամիջոցներն այս ընտրությունների քարոզչության, նախաքարոզչության ընթացքում խիստ անտեսել են ՀՀԿ-ի կոալիցիոն գործընկերոջը՝ ՕԵԿ-ին: Օրինակ, եթե «Ժառանգությանը», ՀՅԴ-ին անդրադարձել են 100 անգամ, ՕԵԿ-ին՝ 50-60: Ընդ որում՝ խոսքը բացասական նյութերի մասին չէ, կայք կա, որ ՕԵԿ-ին անդրադարձել է 0 անգամ: Այդ մասին են վկայում «Լրագրողներ հանուն ապագայի» հ/կ-ի իրականացրած մոնիթորինգի արդյունքները: Կազմակերպության նախագահ Սուրեն Դեհերյանը մեզ հետ զրույցում նշեց, որ ՕԵԿ-ն այդ առումով Կոմկուսից ու Դեմկուսից է առաջ:

Այս առնչությամբ Aravot.am-ի հետ զրույցում մեր հարցին՝ ի՞նչն է պատճառը, որ նման արդյունքներ են եղել՝ ՕԵԿ-ի նկատմամբ այդքան քիչ հետաքրքրություն են դրսեւորել կայքերը, կուսակցության մամուլի խոսնակ Հարություն Ամիրյանը պատասխանեց, որ իրենք ընտրություններից հետո հայտարարություն են տարածել եւ այդ մասով արդեն պատասխան են տվել. «Որոշակի հակաքարոզչություն ՕԵԿ-ի նկատմամբ եղել է, եւ սա նույնպես հակաքարոզչություն ենք դիտարկում: Ես չէի ասի՝ անդրադարձ չի եղել, բոլոր լրատվական կայքերում բավականաչափ անդրադարձներ եղել են»:

Մենք նաեւ հետաքրքրվեցինք, թե արդեն ՕԵԿ-ի նոր անդամատոմսերով անդամներ կա՞ն, դիմողներ եղե՞լ են: Հարություն Ամիրյանը պատասխանեց, որ «այդ գործընթացը դեռ նախնական փուլում է, հունիսի 1-ից նոր միայն բուն թափով կսկսենք բաժանել: Վերակազմավորման ամբողջ պրոցեսը կսկսվի այդ ժամանակ»:

Հ. ՉԵԲԵՉՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 24.05.2012

# «Ծոմակի» շահերի ներկայացուցիչը քրգործի ընթացքով առայժմ բավարարված է

## Իսկ իրավապաշտպանը՝ ոչ

Արդեն հայտնի է, որ մայիսի 8-ին Ղազար Փարպեցի փողոցի վրա գտնվող եւ «Մեյդ Հենդ Մեյդ» ՍՊԸ-ին պատկանող «Դիայվայ»՝ DIY ակումբի հրկիզման փաստի առիթով ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժնի քննչական բաժանմունքում քրեական գործ է հարուցվել: Ինչպես «Առավոտի» հետ զրույցում ասաց ակումբի սեփականատիրոջ՝ Արմինե Օգանեզովա-«Ծոմակի» փաստաբան Լիզա Գրիգորյանը, քրգործը հարուցվել է բացառապես ակումբի հրկիզման փաստով եւ ՔՕ 185-ի 3-րդ մասով՝ գույքին առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառելը: Ոստիկանությունում ակումբը դիտավորությամբ հրկիզելու համար եղբայրներ՝ 1992 թ. ծնված Արամե եւ 1993 թ. ծնված Համբիկ Մ.-երին մեղադրանք է առաջադրվել, բայց երկուսն էլ այսօր ազատության մեջ են, որովհետեւ մեկի նկատմամբ գրավ է կիրառվել, մյուսի նկատմամբ՝ ստորագրություն չհեռանալու մասին: Սրա համար տղաները պարտական են բացառապես հայրենի մի երկու պատգամավորի: Ինչ վերաբերում է հրկիզմանը հաջորդած եւս մի քանի ոտնձգություններին՝ ինչպես ակումբի, այնպես էլ նրա սեփականատիրոջ եւ այցելուների դեմ, որոնք միասին վերցրած՝ բավականին մեծ աղմուկ բարձրացրին ոչ միայն Հայաստանում, այլեւ միջազգային իրավապաշտպան կառույցներում, ապա այդ մասով քրգործեր դեռ չեն հարուցվել. ասում են՝ ոստիկանությունում նյութեր են նախապատրաստվում:


ՖՈՏՈԼՈՒՐ

Փաստաբան Լիզա Գրիգորյանին հարցրինք՝ իր վստահորդին բավարարո՞ւմ է, որ քրգործ է հարուցվել հրկիզման փաստի ու հիշյալ մեղադրանքի շրջանակներում, երբ այդ հրկիզումը փաստորեն զուգորդվել է իրավական տեսանկյունից նաեւ այլ հանցագործությունների հատկանիշներով՝ սեփականության անձեռնմխելիություն, հաշվեհարդարի սպառնալիք եւ այլն: «Մեղադրանքն առայժմ դա է: Այս պահին դեռ մի քիչ դժվարանում եմ ասել՝ բավարար ապացույցներ կա՞ն, թե՞ չէ, բայց մենք այս պահին նյութեր ենք հավաքում»,- հայտարարեց DIY-ի սեփականատիրոջ շահերի ներկայացուցիչ փաստաբանը՝ հավելելով, որ երբ քրեական գործի նախաքննությունը որոշակի փուլի հասնի եւ ապացույցներ ձեռք բերվեն, նոր միայն կմտածեն դրա մասին:

Լիզա Գրիգորյանը նաեւ դժվարացավ ասել, թե որն է իր եւ իր վստահորդի պահանջը կամ ակնկալիքը իրավապահ, քննչական մարմիններից: «Այս պահին դժվարանում եմ որեւէ բան ասել, որովհետեւ փորձաքննություններ են նշանակված, որոնց պատասխանները դեռ չկան: Այսինքն՝ կարելի է ասել, որ գույքը դիտավորյալ ոչնչացնելու փաստը կա, հիմքերն ու ապացույցները կան, բայց մնացած մասով, թե դա ի՞նչ կարելի է որակել՝ չեմ կարող ասել, որովհետեւ դեռ քննություն է գնում, վկաների են լսում: Երբ այդ ամենն ավարտվի, նոր հնարավոր կլինի ամփոփ որեւէ բան ասել»:

Իրավապաշտպաններն այս գործով շեշտում էին, թե խախտվել է նաեւ ակումբի սեփականատիրոջ եւ այցելուների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի սահմանադրական դրույթը: Արդյոք բավարար պայմաններ կա՞ն նաեւ այդ մի իրավունքի ոտնահարման փաստի մասին բարձրաձայնելու: «Դժվարանում եմ ասել: Այս պահին միայն կարող եմ փաստել, որ նրանց նկատմամբ եւ հեռուստատեսությամբ, եւ տարբեր լրատվամիջոցներով մի տեսակ գրոհի նման բան կա: Բայց մյուս կողմից՝ իրենք էլ են ԶԼՄ-ներով հայտարարություններով ու մեկնաբանություններով հանդես եկել, դժվարանում եմ ասել, չեմ ուզում ոչ օբյեկտիվ բան ասել: Պարզ է, որ իրենք զգում են, որ իրենց նկատմամբ ագրեսիա, հարձակում կա, վատ վերաբերմունք կա: Բայց ես ավելի կողմ եմ դա իրավական շրջանակներում ձեւակերպել: Այն, որ որոշակիորեն հասարակական կարծիքը նրանց դեմ տրամադրվեց եւ որոշակի սեռական կողմնորոշման ինչ-որ վերագրումներ եղան՝ բացասական հետեւանքներ, իհարկե, ունեցավ, բայց թե դրանք որքանո՞վ է հնարավոր տեղավորել իրավական հարթությունում եւ որքանո՞վ են իրավաչափ՝ այս պահին դժվարանում եմ որեւէ բան ասել: Երբ նախաքննությունը գոնե մոտ լինի ավարտին՝ հնարավոր կլինի հստակ ասել, թե ինչ է տեղի ունեցել, եւ մեր օրենսդրությունը որքանով է հնարավորություն տալիս տեղի ունեցածի համար քրեորեն պատժել կամ պատասխանատվության ենթարկել»,- հայտարարեց փաստաբանը: Ի հավելումն մեր հարցին, թե՝ պնդելո՞ւ են, որ քրգործ հարուցվի նաեւ այն փաստով, որ հրկիզումից հետո էլ երիտասարդները գալիս էին ակումբ ու անհանգստացնում, սպառնում էին դրա տերերին ու այցելուներին՝ Լիզա Գրիգորյանն ասաց. «Դեռ նյութերը նախապատրաստվում են, երբ վերջացնեն եւ ինչ-որ վերաբերմունք ցույց տան՝ այդ ժամանակ մենք կարող ենք որեւէ բան ասել»:

Իսկ ահա Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար, իրավապաշտպան Արթուր Սաքունցն այս միջադեպերին անդրադառնալով՝ ասաց, թե DIY ակումբի դեմ կատարված գործողություններում մի քանի հատկանիշներով է քրեորեն հետապնդելի արարքներ կատարվել, ու առաջինն այն է, որ խախտվել է մարդու սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը, որը պետք է դառնա քննարկման առարկա: Սաքունցի ասելով՝ նախ՝ առկա է սեփականության իրավունքի ոտնահարման փաստը, նաեւ վնասի փոխհատուցման խնդիր կա, ու ոչ միայն գույքին պատճառված վնասի, այլեւ բիզնեսի մասով, որովհետեւ «ակումբը բիզնես-գործունեություն է, եւ ենթադրաբար դրանից եկամուտներ են ստացվում, որոնք ակումբը չի ստացել հարձակումների եւ չգործելու հետեւանքով, ուստի՝ պիտի նաեւ կրած նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացվի: Նաեւ բարոյական վնասի փոխհատուցման խնդիր կարող է առաջանալ, որովհետեւ ակումբի վերաբերյալ տարածվել է բացասական տեղեկատվություն, որն անխուսափելիորեն կազդի դրա հաճախելիության ու եկամուտների նվազման վրա»: Իրավապաշտպանն ասաց, թե մենք չունենք բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն, բայց դա կարող է Եվրոպական դատարանի քննարկման առարկա դառնալ:

Նա մատնանշեց նաեւ ակումբի սեփականատիրոջ նկատմամբ ոտնձգությունների, նրա պաշտպանվածության ու նաեւ իրավապահ մարմինների կողմից ակումբի՝ որպես բիզնեսի, անվտանգության ապահովման գործում ոչ համաչափ գործողությունների կամ անգործության փաստը՝ հայտարարելով, որ դա եւս կարող է վիճարկման առարկա դառնալ: «Եթե մարդիկ զանգում են ոստիկանություն եւ ասում են՝ էլի եկել են, թքել են կամ ոտնձգություն են կատարել բարի նկատմամբ, իսկ ոստիկանությունն ասում է՝ եկեք հայտարարություն գրեք, կամ ասում են՝ եթե մյուս անգամ էլ գան, նոր կմիջամտենք: Սա այն դեպքում, երբ Մաշտոցի պուրակում բուտիկների պաշտպանվածությունն ու այս դեպքում բարի պաշտպանվածության միջոցառումների բացակայությունն ուղղակի անհամաչափ են: Ոստիկանությունը Մաշտոցի պուրակում ամեն կերպ պաշտպանում էր բուտիկների սեփականատերերի շահերը»,- ասաց Սաքունցը: Իրավապաշտպանն ասաց, թե DIY-ի նկատմամբ հարձակումն ու դրան հաջորդած միջադեպերն արդեն դուրս են եկել միայն մասնավոր շահ լինելու շրջանակներից եւ հայտնվել են ոչ միայն մեր հանրության, այլեւ միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում, ու դրա հետ կապված կոշտ քննադատություններ կլինեն Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված միջազգային կառույցների տարեկան զեկույցներում:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# «Ոչ թե հաշվի են նստում, այլ «վերխ» են վերցնում»

Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանն Aravot.am-ի հետ զրույցում նկատեց, որ կոալիցիա կազմվել-չկազմվելուց ոչինչ չի փոխվելու: Մեր հարցին՝ այնուամենայնիվ, կոալիցիա կլինի՞, թե՞ ոչ, նա պատասխանեց. «Կոալիցիան գործում է 10 տարի, եթե իրական փոփոխություններ էին ուզում, ունեին բոլոր հնարավորությունները: Հիմա էլ հաղթող ուժը՝ Հանրապետականը, ունի այդ հնարավորությունը: Իսկ եթե ինչ-ինչ պատճառներով կամ տակտիկական խնդիրներ լուծելու համար է կոալիցիա ձեւավորվում, ապա արդյունքը նույնն է լինելու: Դրանից ելնելով՝ մենք ասում ենք, որ առաջնայինը ոչ թե նա է, որ կոալիցիա լինի կամ ոչ, այլ այն, թե ով եւ ինչպես է ժողովրդին տրված խոստումներն իրագործելու»:

Ա. Սարգսյանը նկատում է, որ ընտրություններից հետո ժողովրդին արդեն քաղաքական ուժերն ինչ-որ բաներ ապացուցել են, եւ նշում. «Ժողովուրդը տեսավ համատարած թանկացումներ: Բոլոր նրանք, ովքեր բարերարներ էին, հիմա սկսեցին գումարները վերադարձնել տասնապատիկ ավելի, քան ծախսել են: Ուստի կարծում եմ, որ իրական քաղաքական իրավիճակի փոփոխությունը պիտի բխի այն կոնկրետ քայլերից, որ իրականացնում է այն քաղաքական ուժը, որն իր վրա պատասխանատվություն է վերցնում»:

Պարոն Սարգսյանին փոխանցեցինք այն տարածված դիտարկումը, թե ՀՀԿ-ԲՀԿ հակամարտությունը իրականում երկու նախագահների միջեւ հակամարտություն է, եւ խնդրեցինք մեկնաբանություններ անել: Ա. Սարգսյանը պատասխանեց. «Կարծում եմ՝ մինչ նախընտրական փուլը երեք նախագահներն էին իրար հետ բանավինում, հիմա մնացին երկուսը: Առաջինի հետ եղավ այն, ինչ պիտի լիներ. արհեստականորեն իրենց հնարավորություններն ուռճացրին, քանի որ արդեն իսկ բացահայտ էր, որ չունեին այդ ուժերն ու շանսերը: Բայց չգիտեմ՝ իրենց համար վիրավորական չէ՞, որ իրենց զոռով բերեցին հասցրին 7.1-ի աստիճանի: Ուստի այդքանից հետո պարզ էր, որ առաջին նախագահը չի կարող ներկայանալ որպես հասարակական պահանջարկ ունեցող ուժ: Իսկ մյուս երկուսը, որոնք ապահովեցին ձայներ, հիմա պիտի փորձեն մեկը մյուսից ավելի շատ բան կորզել»:

Հետաքրքրվեցինք՝ Ա. Սարգսյանի տպավորությամբ՝ ով ում հետ է հաշվի նստում: ՀԴԿ ղեկավարը պատասխանեց. «Ոչ թե հաշվի են նստում, այլ փորձում են «վերխ» վերցնել»:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## «Հայրենիք եւ պատիվ» կուսակցությունը չի պատրաստվում լքել ՀԱԿ-ը



«Լքել այս կառույցը մեզ համար, կներեք, հազար ներողություն, անբարոյականություն է, ուրեմն մենք դավաճանում ենք մեր սկզբունքներին»,- «Ա1+»-ին ասել է կուսակցության նախագահ Գառնիկ Մարգարյանը, ով չի ցանկանում մեկնաբանել ՀԱԿ-ը լքած քաղաքական ուժերի որոշումները եւ դրանց դրդապատճառները: «Յուրաքանչյուրն ինքն է որոշում իր տեղը, իր դերը»,- ասել է նա:

Գառնիկ Մարգարյանը մնում է ՀԱԿ-ի կազմում եւ առաջիկա օրերին պատրաստվում է ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանին ներկայացնել մի շարք առաջարկներ. «Պետք է համախմբել ժողովրդին, պետք է համախմբել այն ուժերը, որոնք ՀԱԿ-ում չեն եղել, ովքեր վերջին տարիներին մաքուր են մնացել, ովքեր ազնիվ են իրենց գործունեության ընթացքում, եւ տանել համաժողովրդական ընդվզման»:

Այնուամենայնիվ, «Հայրենիք եւ պատիվ» կուսակցության նախագահի կարծիքով՝ ՀԱԿը պետք է հրաժարվեր մանդատներից. «7 մանդատի դեպքում ի՞նչ հաջողության պետք է հասնի ՀԱԿ-ը: Հույս ունենալ, որ որեւիցե պառլամենտական խումբ կարող է միանալ ՀԱԿ-ին, բացառում եմ»: Ի դեպ, կուսակցությունը հրաժարվել էր ընդգրկվել ՀԱԿ ընտրացուցակում:

# «Բացի հոխորտալուց՝ մշակույթի նախարարությունը ոչ մի բանի ի վիճակի չէ»

## Քննադատում է Շիրակի հոգեւոր թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը

Շիրակի պատմական միջավայրի պահպանության մարզային ծառայության պետ Ավետիք Մելիք-Սարգսյանը 1906 թվականին հիմնված եկեղեցին վերանորոգելու ու գյուղացիների համար աղոթատեղի սարքելու պատճառով ընկել է Ախուրյանի շրջանի Բասեն գյուղի ՀՀԿ-ական գյուղապետ Համլետ Պետրոսյանի հետեւից: Բանը հասել է նրան, որ հավատացյալ գյուղապետի հարցերը լուծելու համար մշակույթի նախարարությունը դիմել էր Շիրակի մարզի դատախազություն, որտեղ, սակայն, քրեական գործ չէին հարուցել Համլետ Պետրոսյանի դեմ: Գյուղապետը մեզ հետ զրույցում դժգոհեց. «Ես Ռուսաստան եմ գնացել, այնտեղ աշխատող մեր համագյուղացիներից դրամահավաք ենք կազմակերպել, տարիներով կուտակված եկեղեցու աղբը մաքրել ենք, որպեսզի մի աղոթատեղի էլ մենք ունենանք, ինձ մոտ է գալիս Մելիք-Սարգսյան ազգանունով մեկը ու հոխորտալով փորձում է խոչընդոտել իմ նախաձեռնած Աստվածահաճո գործին: Նա սխալ ուղղություն է ցույց տալիս, ասում է՝ պիտի գնաս մարզպետարան, դիմում տաս, որ քեզ թույլ տան շինարարություն իրականացնելու, ես գնում եմ, դիմում եմ տալիս, մարզպետարանում զարմանում են, թե՝ ո՞ւր ես եկել, մշակույթի նախարարություն պիտի գնայիր: Որոշ ժամանակ անց մշակույթի նախարարությունն ինձ հրամցնում է դատախազությանը: Բա կարելի՞ է էս գործին այսպես խոչընդոտել: Հիմա էլ ուզում ենք համայնքային բյուջեից որոշակի ներդրում կատարել, բայց չկա մշակույթի նախարարության համաձայնությունը, այստեղից ասում են՝ փոխեք նախագիծը, մեկ կամարը՝ առանց սյուների, ընդունելի չէ, դարձրեք 3 կամար, սա էլ կրկնապատկում է մեր ծախսերը»: Մենք այս թեմայի շուրջ պարզաբանումներ խնդրեցինք նաեւ Շիրակի հոգեւոր թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանից, որն ասաց.



«Եկեղեցի կառուցելը բարդ չէ այնքան, բայց եկեղեցի վերակառուցելը բարդացնում են մշակույթի նախարարության աշխատակիցները: Կոնկրետ Բասենում այդպիսի մի իրավիճակ է ստեղծված, երբ Բասենի գյուղապետը կարող է, ի վիճակի է եկեղեցին վերակառուցել, բայց, չգիտես որտեղից, մշակույթի նախարարության որոշ աշխատակիցներ հուզվել են ու ինչ-որ դժվարություններ են հարուցում: Անշուշտ, այդ դժվարությունները դարձյալ լուծելի են, եւ գյուղապետը կարող է շրջանցել դրանք, ինչպես ուրիշ համայնքապետեր են շրջանցում, բայց մի քիչ երեւի ավելի մեղմ տղա է Բասենի գյուղապետը, ու դրանից օգտվելով՝ որոշ մարդիկ իրենց լավ են զգում ու փորձում են իրենց իշխանություն վերապահել: Ես չեմ կարծում, որ այստեղ խնդիր կա, խնդիրը համայնքապետի չափից ավելի բարեպաշտ, ավելի բարի, համեստ մարդու մեջ է»: Սրբազանի ասելով՝ «Բասենի եկեղեցին իրենից պատմական-մշակութային արժեք չի ներկայացնում, որպես այդպիսին գրանցված չէ, սակայն որոշ մարդիկ՝ ցույց տալու համար, որ իրենք գործ են անում, կարեւորություն են ու անհրաժեշտություն այս երկրում, իրենց ավելորդ կարեւորություն են տալիս: Այս եկեղեցին 20 տարուց ավելի լքված էր, խոնարհված էր, աղբանոցի էր վերածված, նույնիսկ մեկ լուցկու հատիկ այստեղից մշակույթի նախարարությունը չի վերցրել, այդ եկեղեցին մաքրվել, տեսքի է բերվել մեր ջանքերով, քաղաքակիրթ ավերակի է վերածվել մեր ջանքերով, որից հետո էլ նաեւ մեր ցուցումով, հորդորով գյուղապետը նախաձեռնել է շինարարությունը, նախագիծը մենք ենք պատրաստել: Հենց որ գործը սկսվել է, հայտնվել են՝ ասելու համար, թե այս ի՞նչ եք անում առանց մեր թույլտվության. երբ որ ձեր թույլտվությամբ քանդվում էր, ո՞ւր էիք, երբ որ աղբանոցի էր վերածվում, ո՞ւր էիք, երբ որ անտերության էր մատնված, ո՞ւր էիք: Տեսնում են, որ դրամի հարց կա, մտածում են՝ ինչպե՞ս թե, մենք պիտի անենք նախագիծը, մենք պետք է տանք շինթույլտվություն, մեր շինարարները պիտի անեն, դրամի հոտ են առել»,- մեկնաբանում է Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Ըստ սրբազանի՝ Շիրակի մարզում կան այլ համայնքներ, որտեղ ավելի կարեւոր պատմամշակութային արժեքներ են վերակառուցվում, եւ մշակույթի նախարարությունն ու այլ պատկան մարմիններ ծպտուն չեն հանում եւ չեն էլ կարող հանել, որովհետեւ վախենում ու սարսափում են տվյալ համայնքապետից: «Բասենի գյուղապետը մեղմ տղա է, ուրեմն նրա վրա կարելի է հարձակվել, բայց ես նրան ասել եմ, ասա՝ սրբազանն է անում, սրբազանն է հեղինակը, թող համարձակվեն գալ ինձ մոտ: Բա հիմարություն չէ՞ գյուղապետին դատախազություն տալը, աբսուրդ է. ոչ մի դատախազություն գործ չի հարուցի եկեղեցի կառուցելու համար»: Ըստ սրբազանի՝ մշակույթի նախարարությունը Շիրակի մարզում մատուռ կամ եկեղեցի վերանորոգելու առումով մատը մատին չի խփել, իսկ նրա ենթակայության տակ գտնվող հուշարձանների պահպանության վարչությունը «պորտաբույծ ու ձրիակեր կառույց է»: «Երբեմն շահագործում են Մարմաշենի պարագան, բայց Մարմաշենում իրենք չեն արել, արել է Գայանե Կազնատին, այդ կես-իտալացի, կես-հայ աղջիկը միջոցներ է հավաքել, բերել է՝ Մարմաշենի վրա իրականացրել է որոշ աշխատանքներ, այն՝ մշակույթի նախարարության գիտությամբ: Ուրեմն, եթե մենք ձեռքերս ծալեինք ու նստեինք, որ մշակույթի նախարարությունը եկեղեցի վերակառուցեր, եկեղեցի չէինք էլ ունենա»,- ասում է սրբազանը: Ըստ Շիրակի հոգեւոր թեմի առաջնորդի՝ Բասենի եկեղեցին քարուքանդ է եղել հենց նախարարության մեղքով. «Մարմաշենում, Հառիճում, Ամենափրկիչում նորոգություն լինի, գան, ասեն՝ ի՞նչ եք անում, բայց 19-րդ դարի գյուղական ժամի վերակառուցման մեջ ի՞նչ գործ ունի մշակույթի նախարարությունը, որն առ այսօր ոչ մի գործ չի ունեցել, իր անփութության, անտարբերության, անգործության պատճառով է քարուքանդ եղել եկեղեցին: Ես Մելիք-Սարգսյանին չեմ տեսել, որ ասեմ՝ տղա ջան, ինչո՞վ ես զբաղված վերջիվերջո, ուրիշ գործ չունե՞ս անելու, գնա այն մյուս եկեղեցիները, որոնք ամեն օր ոտնձգության են ենթարկվում բնակիչների կողմից, աղբ է լցվում, քանդվում է, գնա դրանց վիճակով զբաղվիր: Քանի՞ եկեղեցի կա այսօր, որ, ասենք, գոմերը կպած են եկեղեցուն, պահպանման տարածքը խախտված է, եկեղեցի կա, որի պատին շնաբույն են դրել, շուն են պահում, գնա դրանով զբաղվիր: Օրինակը տամ. Աշոցքի շրջանի Մուսայելյան գյուղում 19-րդ դարի եկեղեցում կցակառույց կա, մեկը իր գոմն է այնտեղ կառուցել, շանն էլ կապել է իր գոմին, փորձեք գնալ ու մոտենալ, կացինով կգա ձեզ վրա: Դե, գնացեք, պետություն եք, մշակույթի նախարարություն եք, գնացեք, ես ի վիճակի չեմ էդ մարդու վրա գնալու, գնացեք էդ եկեղեցին ազատագրեք, հոխորտալուց բացի՝ ոչ մի բանի ի վճակի չեք»,- եզրափակեց Շիրակի հոգեւոր թեմի առաջնորդը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## Ողջի գետի Գեղանուշ վտակը վարարել է ու բնակավայրերն ավերել



Երեկ առավոտյան Կապան քաղաքում մեծ հեղեղումներ է առաջացրել Ողջի գետի Գեղանուշ վտակը: Սյունիքի մարզային փրկարարական ծառայությունում առավոտյան ժամը 10:45-ի սահմաններում դեպքի վերաբերյալ ահազանգ ստանալուց հետո ստեղծված արտակարգ իրադրության վայր է մեկնել փրկարարական վարչության օպերատիվ խումբը եւ տեղում արձանագրել, որ վարարած գետի ջրերով ողողվել է Կապանի Երկաթուղայինների փողոցի 5-րդ նրբանցքում տեղակայված Սեւադա Զաքարյանի քարի արտադրամասը: «Քարի արտադրամասի 500 քմ տարածքից ավելի հատվածը, հաստոցների շարժիչները եւ ձեռնարկության գրասենյակները ջրով են լցվել՝ հասցնելով նյութական բավականին վնասներ», տեղեկացնում են Սյունիքի մարզային փրկարարական ծառայությունից:

Թեեւ քարի արտադրամասի աշխատակիցների ջանքերով ձեռնարկությունը մաքրվել է ջրից, տարաներով հեռացվել են ներսում կուտակված ջրերը, բայց դեռ մտավախություն կա, որ գետը կարող է երկրորդ անգամ նույն խնդիրն առաջացնել: Հիշեցնենք, որ երեկ գիշերը Ողջի գետի մյուս վտակի՝ Վաչագանի վարարումից բավականին վնասներ է կրել Կապան քաղաքի թաղամասերից մեկը, որտեղ այս պահին դեռ կատարվում են փողոցների մաքրման եւ ավերածությունների հետքերի վերացման աշխատանքներ:

ՄԵՐԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

## «Դիջիթեք բիզնես-ֆորում 2012. թվային լուծումներ նորարար տնտեսության համար»

Երեկ տեղի ունեցավ մամուլի ասուլիս՝ «Դիջիթեք բիզնես-ֆորում 2012. թվային լուծումներ նորարար տնտեսության համար» թեմայով: Բանախոսներն էին՝ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը, «ԱրմենՏել» ընկերության գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն, ԱՄՆ ՄԶԳ ՁԶՇՄ ծրագրի Արժեքի շղթայի բաղադրիչի ղեկավար Զդրավկո Շամին:

Դեռեւս 2008-ից Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ), առաջնային նպատակ հայտարարելով տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդնումը տնտեսության այլ ոլորտներում, կազմակերպում է Դիջիթեք բիզնես-ֆորումը, որն այս տարի տեղի կունենա հունիսի 15-16-ը՝ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում: «Հայաստանի տարբեր ոլորտներում բիզնես կիրառումների ներդրման անհրաժեշտություն կա: Իրավիճակը փոխելու եւ երկրում ինովացիոն տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ է այնպիսի միջավայր, որտեղ գործարարները եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայություններ մատուցողները հանդիպեն ու քննարկեն իրենց խնդիրները: DigiTec բիզնես-ֆորումը հենց այդ միջավայրն է»,- նշեց ԻՏՁՄ գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը:

Արդեն 3-րդ անգամ Ֆորումի գլխավոր գործընկեր հանդիսացող «ԱրմենՏել» ընկերությունը կարեւորում է միջոցառման դերը: «Դիջիթեք բիզնես-ֆորումը մեծ հնարավորություն է տալիս մասնակիցներին ծանոթանալու այն առավելություններին, որ կարող է իրենց տրամադրել ՏՀՏ գործիքների կիրառումն իրենց բիզնեսում՝ խթանելով իրենց ընկերությունների վաճառքների ավելացումը, նոր շուկաների նվաճումը, հաճախորդների սպասարկման եւ արտադրանքների որակի կտրուկ բարձրացումը, արտադրողականության ավելացումը եւ այլն»,- ասաց «ԱրմենՏել» ընկերության գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն: «ԱրմենՏելը» Ֆորումի ընթացքում այցելուներին կներկայացնի բջջային եւ ֆիքսված կապի, ինչպես նաեւ տվյալների փոխանցման բազմաթիվ բիզնես-լուծումներ: Մասնավորապես, «Վիրտուալ մասնավոր ցանցի» (VPN) ծառայությունը, որի միջոցով տարբեր տարածքներում բաշխված գրասենյակները համախմբվում են միասնական կորպորատիվ մասնավոր ցանցում: Դա թույլ է տալիս օպտիմալացնել ընկերության բիզնես-գործընթացները, ապահովել փոխանցվող տեղեկատվության գաղտնիությունը, ստանալ կապի բարձր որակ: Կներկայացվեն նաեւ «ամպային տեխնոլոգիաները» եւ բիզնես-գործընթացներում դրանց կիրառման առավելությունները:

# Սեփականատերը ողնում է վտարման իր պահանջը

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Գագիկ Խանդանյանի նախագահությամբ, շարունակվում է «Ռան օյլ» բենզալցակայանի տնօրեն Ռոբերտ Գալուստյանի հայցադիմումի քննությունը՝ ընդդեմ «Նելլի Միքայել» ՍՊԸ տնօրեն, «BELLA» հյուրանոցի տնօրեն Նելլի Ավետիսյանի:

Ե. Քոչարի 6 հասցեի սեփականատեր Ռոբերտ Գալուստյանը դատարանով պահանջում է լուծել հյուրանոցի հետ այս տարվա հունվարի 24-ին կնքած վարձակալության պայմանագիրը եւ տարածքից վտարելու հարց է բարձրացրել: Հիշեցնենք, որ պայմանագիրը կնքված էր մինչեւ 2015թ. համար:

Նախորդ դատական նիստի ժամանակ, դատարանը, որը հեռացել էր խորհրդակցական սենյակ, պատասխանողի ինքնաբացարկի հարցով, վերադարձավ եւ մերժեց այդ միջնորդությունը եւս:

Պատասխանող-հյուրանոցի ներկայացուցիչը հայտարարեց, որ հակընդդեմ հայցով դիմել է այս նույն դատարանին, սակայն դատարանը այն չի ընդունել: Դատավոր Գագիկ Խանդանյանի եւ պատասխանողի միջեւ սկսվեց լեզվակռիվ, դատավորն ասում էր, որ հակընդդեմ հայցը մերժվել է, իսկ պատասխանողը պահանջում էր հակընդդեմ հայցի մերժման որոշումը: Նա ասաց, որ քանի դեռ այդ որոշումը չկա, ապա անհնար է, իր մարտավարությունից ելնելով, դատական նիստը շարունակել:

Մենք տեղեկացրել ենք վարձակալ հյուրանոցի դիրքորոշումը. կողմը պնդում է նաեւ մինչ օրս: ՍՊԸ-ն գտնում է, որ որեւէ պատճառ չկար վաղաժամկետ լուծարելու պայմանագիրը, հյուրանոցի տնօրեն Նելլի Ավետիսյանը նշում է նաեւ, որ տուրիստական ընկերությունների հետ կնքված մի շարք պայմանավորվածություններ խախտվել են, եւ ինքը կրել է զգալի վնաս:





Ռոբերտ Գալուստյանը «Առավոտի» հետ զրույցի ժամանակ հայտնեց, որ կողմը չի կատարել իր վարձակալության պայմանագիրը, երեք ամսվա վարձավճարը չի մուծել, իսկ հյուրանոցն էլ չի գործել ըստ նշանակության.

«Այնտեղ ապրել են նաեւ այլ մարդիկ»: Հյուրանոցի ամսական վարձը կազմել է 80 000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվեր յուրաքանչյուր ամսվա 9-ին:




«Պատասխանողն իր գործողություններով խախտել է պայմանագրի էական պայմանը, որը հանգեցնում է մյուս կողմի՝ Ռոբերտ Գալուստյանի համար այնպիսի վնասի, որը հայցվորին զրկել է այն բանից, ինչը նա ակնկալել է պայմանագիրը կնքելիս, այսինքն՝ ստանալ վարձակալությամբ տրված գույքի դիմաց պայմանագրով սահմանված վարձավճարը»,- ասում է Ռ.Գալուստյանի ներկայացուցիչ, ՀՀ փաստաբանների պալատի անդամ Արթուր Դավթյանը:

Ի դեպ, երբ դատական նիստի ժամանակ պատասխանող-հյուրանոցն ասաց, որ միայն մի պայմանավորվածությունից ինքը կորցրել է 16 500 դոլարին համարժեք գումար, փաստաբանը հարցրեց, թե ինչպես կարող է սեփականատերը 80 000 դրամի դիմաց հանդուրժի նման օգուտ, երբ ինքը կարող էր դա ստանալ:

Ռ. Գալուստյանը նաեւ ասաց, որ պայմանագրային պարտավորության խախտման համար զգուշացրել է վարձակալին՝ գրություն է ուղարկել «Նելլի Միքայել» ՍՊԸ. «Առաջարկեցի 5-օրյա ժամկետում ազատել տարածքը, սակայն նրանք շարունակում են իմ սեփականությունը հանդիսացող տարածքում գործունեություն ծավալել»:

Մեր այն հարցին, թե պայմանագիրը կնքված է մինչեւ 2015-ը, եւ ինչ իրավական հիմքերով է սեփականատերը վտարելու պահանջ ներկայացնում, պարոն Գալուստյանն ասաց. «Հունվարի 24-ի թիվ 274 պայմանագրի 4.4 կետի «բ» ենթակետի համաձայն, իրավունք ունեմ միակողմանի վաղաժամկետ լուծել պայմանագիրը»: Ի դեպ, դատարան ներկայացված հայցապահանջի հիմքերից մեկն էլ դա է:

Հայցվոր կողմը հղումներ է անում նաեւ գործող Քաղաքացիական օրենսգրքին, մասնավորապես՝ 469 հոդվածի 5-րդ մասին. «Եթե պայմանագրի կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն էլ իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները»:

Ռոբերտ Գալուստյանը մեզ հետ զրույցի ժամանակ նաեւ տեղեկացրեց, որ եղել են Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատանը, քանի որ հյուրանոց-կողմեր վերջին առնչվել է իրանական գործարարի շահերի հետ էլ:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Ըստ դատախազի՝ Արսեն Արծրունու դատավճիռը ճիշտ է



Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը «Դրո» խմբի գործով ցմահ ազատազրկման դատապարտված Արսեն Արծրունու բողոքի հիման վրա արտագնա նիստ էր հրավիրել արդարադատության նախարարության «Նուբարաշեն» ՔԿՀ-ում:

ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գծով վարչության պետի տեղակալ Արթուր Դավթյանը պնդեց, որ 1996թ. դեկտեմբերի 10-ի Գերագույն դատարանի դատավճիռը համապատասխանում է գործող Քրեական օրենսգրքին: Նա նշեց, որ Գերագույն դատարանի ընդունած դատական ակտով Արսեն Արծրունին ղեկավարել է «զինված բանդա հանդիսացող «Դրո» կառույցը»: Գերագույն դատարանը, ըստ դատախազի, հաստատված է համարել եւ Արծրունուն մեղավոր է ճանաչել բանդայի անդամների միջոցով Ներսիսյանի եւ Սահակյանի սպանությունը կազմակերպելու համար: «Այլ խոսքով՝ իր մեջ ներառել է երկու անձանց սպանությունների կազմակերպում: Արդյոք այսօրվա Քրեական օրենսգիրքը նախատեսո՞ւմ է երկու անձանց սպանության հանցակազմ: Այո, նախատեսում է գործող օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի առաջին կետով»,- ասաց Ա. Դավթյանը:

Ընդսմին նա շեշտեց, որ երկու անձանց սպանությունը դիտվել է ծանրացնող հանգամանք: «Եթե երկու անձի սպանության կատարումը ներառվում էր հանցավորի միասնական դիտավորության մեջ, ապա արարքը որակվում է 104 հոդվածի 2-րդ մասի առաջին կետով»,- շարունակեց Ա. Դավթյանը:

Նա նաեւ նշեց, որ նոր Քրեական օրենսգրքի փոփոխությունը չի նշանակում, թե ապաքրեականացվել է երկու անձի սպանությունը: Դատախազը, այն հարցադրմանը, թե արդյոք չունե՞նք մեղմ օրենք կամ անձի վիճակը բարելավող օրենք, ասաց. «Օրենսդրական արգելք չունենք եւ գործող օրենսգրքով երկու անձի սպանությունը դիտվում է հանցագործության ծանր տեսակ»:

Դատախազը հակադարձելով Արսեն Արծրունու պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի անդամ Նարինե Ռշտունու միջնորդությանը, թե անհրաժեշտ է բեկանել Գերագույն դատարանի ակտը, նոր դատաքննություն իրականացնել, ասաց, որ դա չի բխում գործող օրենքի պահանջից եւ որ իրենք խնդիր չունեն որոշելու դատապարտյալի անմեղության-մեղավորության հարցը, այլ խնդիր ունեն արարքը որակել այսօրվա օրենսդրությամբ:

Նարինե Ռշտունին խորհրդակցելով Արսեն Արծրունու հետ՝ ռեպլիկի համար, խնդրեց 2 շաբաթ ժամանակ: Դատական նիստը նշանակվեց հունիսի 8-ին՝ դարձյալ մեկուսարանում:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

## 46-ամյա երիտասարդի դին

ԱԻՆ փրկարար ծառայությունից երեկ տեղեկացրին, որ մայիսի 22-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Օհանովի 2 շենքի 87-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում դռան ու հեռախոսի զանգերին եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Իրավապահ մարմինների ներկայությամբ՝ փրկարարները բացել են նշված բնակարանի դուռը եւ հյուրասենյակի հատակին հայտնաբերել Սյունիքի մարզի Աշոտավան գյուղի բնակիչ՝ 46-ամյա Սեդրակ Սաֆարյանի դին:

## «1-03» ծառայությունից տեղեկացնում են

Դեղորայքային թունավորման նախանշաններով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Շահումյանի 13-րդ փողոցի թիվ 30 տան բնակչուհի՝ 20-ամյա Տաթեւիկ Սաֆալյանը: Ըստ բժիշկների՝ նրա առողջական վիճակը միջին ծանրության է:

## Վնասվածքներ են ստացել

Ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ Արգավանդ-Հովտաշատ ավտոճանապարհին տեղի է ունեցել ավտոպատահար:

Դեռեւս չպարզված հանգամանքներում բախվել են «Օպել» մակնիշի 32 LS 818 պ/հ եւ «Մոսկվիչ» մակնիշի 63 UL 449 պ/հ ավտոմեքենաները:

Մեքենաների վարորդները՝ 1966թ. ծնված Ա. Կիրակոսյանը եւ 1989թ. ծնված Ռ. Ռոստոմյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Մասիսի հիվանդանոց:

Մեկ այլ ավտոպատահար էլ տեղի էր ունեցել Վայոց ձորի մարզում՝ Ջերմուկի Մաշտոցի փողոցում: Բախվել են Վ. Առուստամյանին պատկանող «ՎԱԶ 21011» մակնիշի 56 SU 134 պ/հ եւ Վ. Հովհաննիսյանին պատկանող «Մերսեդես» մակնիշի 07 SS 929 պ/հ ավտոմեքենաները:

Պատահարի հետեւանքով «ՎԱԶ 21011» ավտոմեքենայի ուղեւոր՝ 1985թ. ծնված Արմենուհի Առաքելյանը ստացել է վնասվածքներ ու տեղափոխվել «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ:

Առաջին բուժօգնություն ստանալով՝ տուժածը դուրս է գրվել:

## Մեքենան՝ շրջափակման մեջ

Մայիսի 23-ին, ժամը 01.43-ին ահազանգ է ստացվել, որ Սյունիքի մարզի Սյունիք գյուղի մոտակայքում՝ Ողջի գետի վարարման հետեւանքով ավտոմեքենան կամրջի վրա հայտնվել է ջրային շրջափակման մեջ եւ չի կարողանում դուրս գալ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Կապանի հրշեջ-փրկարարական ջոկատից դեպքի վայր է մեկնել 4 հրշեջ-փրկարար, որոնք «ՌԱՖ» մակնիշի 03 LU 940 պ/հ ավտոմեքենայից վարորդ Շ. Վարդանյանին դուրս են բերել անվտանգ տարածք:

# «Կուկլա ջան, անոնք ատուշ են, բա դո՞ւ»

## Արվեստաբան Սերգեյ Առաքելյանը՝ Գոհար Գասպարյանի եւ իր մատենաշարի մասին

Արվեստաբան, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սերգեյ Առաքելյանը 2000թ. հիմնեց «Հայ մշակույթի մեծերը» մատենաշարը, որի 10-րդ գիրքը լույս է տեսել օրերս՝ նվիրված անվանի գուսան Շերամի ծննդյան 155-ամյակին: Ինչպես նախորդ աշխատությունները՝ նվիրված Գոհար Գասպարյանին, Կարո Խաչվանքյանին, Սվետլանա Գրիգորյանին, Բաբկեն Ներսիսյանին, Օֆելյա Համբարձումյանին, Երվանդ Ղազանչյանին, Գալյա Նովենցին եւ այլոց, «Շերամը» նույնպես ծավալուն, վավերագրություններով հարուստ, պատկերազարդ, անտիպ գործերի, շուրջ 40 երգերի ձեռագիր նոտագրությունների հավաքածու է:

«Առավոտը» Սերգեյ Առաքելյանի հետ հանդիպման ժամանակ հիշեցրեց ժամանակին Սիլվա Կապուտիկյանի՝ արվեստաբանի այս ձեռնարկի առիթով ասված խոսքը՝ «Մատենաշարի յուրաքանչյուր հատորը հայ թատրոնի տարեգրությունը հարստացնող արժեքավոր մատենագիտություն է...»: Մեր զրուցակիցն էլ իր հերթին հիշեց անվանի բանաստեղծուհու հետեւյալ խոսքերը. «Սերգեյ ջան, շա՜տ թանկ հաճույք է այս հրաշալիքը...»:

Մեզ էլ հետաքրքրեց մեր օրերում հրատարակվող տպագրական բարձրորակ գրքերի արժեքը (մատենաշարը տպագրվում է «Զանգակ-97» հրատարակչությունում): Այս առիթով մեր զրուցակիցը նախ նշեց, թե տարբեր «ճանապարհներով» են հրատարակվում, հետո էլ փոքր-ինչ մանրամասնեց. «Որոշ գրքեր տպագրվում են մշակույթի նախարարության աջակցությամբ, որոշներն էլ հրատարակվել են դերասանների ընտանիքների օգնությամբ: Իսկ, օրինակ, «Շերամի» տպագրության ծախսերը հոգացել է գուսանի հայրենակից Գյումրիի քաղաքապետը: Ի դեպ, նա խոստացել է աջակցել նաեւ հաջորդ գրքի հրատարակմանը՝ նվիրված դարձյալ իր հայրենակից, անվանի երգչուհի Արաքսի Գյուլզադյանին»:



Սերգեյ Առաքելյանը հաստատելով այն, որ մատենաշարի գրքերը վաճառքի չեն հանվում, ասաց. «Դրանք նվիրվում են հայաստանյան գրադարաններին, մասնագիտական բուհերին, մշակութային օջախներին»: Իսկ չի՞ պատրաստվում, օրինակ, աշխատություններ նվիրել Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի 90 եւ Հ. Պարոնյանի անվան կոմեդիայի, ինչպես նաեւ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնների 70 եւ 80-ամյակներին: Վերջինս լրանում է 2013թ.: Մեր զրուցակիցը հայտնեց, որ Սունդուկյանի եւ Պարոնյանի անվան թատրոնների գիրքալբոմները պատրաստ են հրատարակության. «Ինչ վերաբերում է Օպերային թատրոնին, վերջինիս տնօրինության հետ պատրաստվում ենք հաջորդ տարի կազմակերպել թանգարանային ցուցադրություն: Կներկայացվեն 1933-ից մինչ օրս բեմադրված ներկայացումների լուսանկարներ, վավերագրեր, հայտագրեր, մեր մեծերի՝ Հայկանուշ Դանիելյանի, Տաթեւիկ Սազանդարյանի, Շարա Տալյանի, Գոհար Գասպարյանի, Ավագ Պետրոսյանի, Միհրան Երկաթի ու մյուսների՝ որոշ ներկայացումներից պահպանված զգեստները, աքսեսուարները եւ այլն»:

Մեր զրուցակցին խնդրեցինք որեւէ հետաքրքիր դրվագ պատմել՝ կապված մատենաշարի հերոսների հետ: «Հազարավոր տպավորություններ կարող եմ փոխանցել: Նրանք բոլորը համեստ են, մի տեսակ քչով բավարարվող, շքեղ դղյակների, կահ-կարասիների հավակնություններ չունեն, ինչպես այսօրվա «աստղերը»... Երբ 1984թ. Գոհար Գասպարյանը խորհրդային երկրի նշանավոր երգչուհիներից առաջինն արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման եւ Լենինի շքանշանի, Երեւանի օպերային թատրոնում պատրաստվում էին մեծարման երեկոյի: Գոհարն ինձ ասաց՝ Սերգո ջան, գնա տես աֆիշում ի՞նչ են գրել: Եկա ասացի, թե նշված են իր բոլոր կոչումները, տիտղոսները, շքանշանները՝ մինչեւ անգամ Երեւանի պատվավոր քաղաքացի: Զարմացած նայեց վրաս ու ասաց՝ Կուկլա ջան, անոնք ատուշ են՝ գրել են, բա դո՞ւ... Գնա ասա՝ բոլորը ջնջեն, թողնեն միայն՝ երգում է Գոհար Գասպարյանը, բոլոր էդ կոչումները անունիս մե՞ջ չեն...»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը «Նոր անուններ» փառատոնի կողքին է



«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը կրկին «Նոր անուններ» պատանի երաժիշտ-կատարողների միջազգային փառատոնի գլխավոր հովանավորն է: Արդեն երկրորդ տարին ընկերությունը ստանձնում է «Նոր անունների» հովանավորությունը: Փառատոնի ծրագրերը երեկ ներկայացվեցին ՀՀ մշակույթի նախարարությունում կայացած մամուլի ասուլիսի ընթացքում:

«Նոր անուններ» պատանի երաժիշտ-կատարողների 2-րդ միջազգային փառատոնը կիրականացվի մայիսի 29-ից հունիսի 1-ը՝ Երեւանում: Փառատոնի կազմակերպիչն է «Հայաստանի նոր անուններ» ծրագիրը (ղեկավար՝ մշակույթի գործիչների ընկերակցության նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սիլվա Մեքինյան): Փառատոնն իրականացվում է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Այս տարի փառատոնին մասնակցելու են հրավիրված մինչեւ 18 տարեկան շուրջ քառասուն շնորհալի պատանի երաժիշտներ՝ աշխարհի տարբեր երկրներից (այդ թվում՝ Վրաստան, Ֆրանսիա, Ռուսաստան, Մալթա, Ուզբեկստան, Կորեա), ովքեր երեւանյան ունկնդրին կներկայանան ինչպես նվագախմբային, այնպես էլ մենանվագ կատարումներով:

# Ընդունելության քննությունների ձեւաչափն արդյունավետ չէ

## Ժամանակն է գործել արեւմտյան երկրների նման

Ընդունելության քննությունները նորից հայտնվեցին հասարակության ուշադրության կիզակետում: Մի կողմից՝ շուրջ 18 000 դիմորդներ գերլարված իրենց վերջին պարապմունքներն են անցկացնում, մյուս կողմից՝ կրկնուսույցները ջանք ու եռանդ չեն խնայում արդարացնելու վճարունակ դիմորդների ծնողների հույսերը, եւ վերջապես, մասնավոր բուհերն էլ սրտատրոփ սպասում են, թե այս տարվա նորամուծության արդյունքում դիմորդ կունենա՞ն, թե՝ ոչ:

Չեմ կարծում, որ այս «գերշիկացած» մթնոլորտն իրոք նպաստում է արդյունավետ ընդունելության քննությունների կայացմանը, ինչպես բարոյահոգեբանական, այնպես էլ տնտեսական առումով: Բազմիցս նշել եմ, որ կրկնուսույցների ինստիտուտն արդարացված չէ: Ձեւավորվել է ընդունելության քննությունների մի այնպիսի մեխանիզմ, որտեղ կրկնուսույցները լուրջ դերակատարում ունեն: Իսկ դա նշանակում է՝ դիսկրիմինացիա սոցիալապես ապահով եւ անապահով դիմորդների միջեւ, որովհետեւ կրկնուսույցների ծառայություններից օգտվելը լուրջ գումարներ է պահանջում: Բացի այդ, անհավասար պայմաններում են հայտնվում մայրաքաղաքային եւ մարզերի շրջանավարտները, քանի որ «որակյալ կրկնուսույցների» խիստ պակաս կա հանրապետության հեռավոր գյուղերում:



Արդեն մի քանի տարի է, ինչ մեր հանրապետությունը դարձել է Բոլոնյան համաձայնագրի անդամ, սակայն, չգիտես ինչու, ընդունելության քննությունների հարցում կարծես շրջանցվում են արեւմտյան սկզբունքները: Իսկ համաձայն այդ սկզբունքների, բուհերը չափազանց մեծ վստահությամբ են վերաբերվում հանրակրթության համակարգի գնահատականներին, եւ դիմորդը պարզապես ընդունելության քննությունների այդ հուզական եւ գերլարված գործընթացից ձերբազատվում է: Բացի այդ, արեւմտյան համալսարանները մեծ վստահություն են ցուցաբերում միջին մասնագիտական կրթօջախներից դիմորդի վաստակած ակադեմիական կրեդիտներին, որոնք հիմք են հանդիսանում առանց ընդունելության քննությունների քոլեջների շրջանավարտների բուհ ընդունվելուն: Արդեն իսկ քոլեջներում միջին մասնագիտական կրթություն ստացած ուսանողները որոշում են կայացնում՝ արժե՞ շարունակել ուսումը բուհերում, կատարվե՞լ է, արդյոք, մասնագիտության ճիշտ ընտրություն, թե՞ պետք է վերաորակավորում ստանալ համալսարաններում, բակալավրիատում սովորելով ոչ թե չորս, այլ ընդամենը երկու տարի: Այս ճանապարհով անկասկած կատարվում է ոչ միայն մասնագիտական ճիշտ կողմնորոշում, այլեւ համալսարանական բարձր կրթավճարների խնայողություն: Մի խոսքով, ամեն ինչ արվում է՝ կիրառելու ընդունելության քննությունների ճկուն, համեմատաբար էժան եւ ոչ սթրեսային մեխանիզմներ, որը չէի ասի, թե նկատվում է մեր երկրում:

Ընդունելության քննությունների գործող ձեւաչափը արդյունավետ չեմ համարում նաեւ դիմորդի կողմից մասնագիտությունների ընտրության առումով: Սոցիոլոգիական հարցումները վկայում են, որ աշակերտական նստարանին հենց նոր հրաժեշտ տված դիմորդների մեծ մասը մասնագիտություն ընտրելիս առաջնորդվում է «մոդայով», եւ ոչ թե հիմնավոր կողմնորոշումներով: Եվ արդյունքում՝ բուհում սովորելու առաջին իսկ տարիներին ուսանողության զգալի հատվածի մոտ ձեւավորվում է «հիասթափություն» իրենց իսկ կողմից կատարած մասնագիտության ընտրության առումով:

Եթե անկեղծանանք, այստեղ առավելապես մեղքի բաժինը ունեն հենց բուհերը, որոնք իրենց ապագա դիմորդների հետ դպրոցներում լրջագույն աշխատանք չեն կատարում: Առավել արդյունավետ կլիներ բուհական ծրագրերով ավագ դպրոցներում մասնագիտական ներածության դասավանդումը եւ հենց այդ գնահատականներով ընդունելության կազմակերպումը: Այն մի կողմից կողմնորոշիչ դեր կկատարեր ապագա դիմորդի մասնագիտության ընտրության հարցում, մյուս կողմից՝ կբարձրացներ բուհական ուսումնառության արդյունավետությունը, քանի որ համալսարանները հենց իրենք կընտրեին ապագա ուսանողներին, եւ ոչ թե այդ գործը կվստահեին կենտրոնացված ընդունելության հանձնաժողովներին, որոնք այնպիսի առարկաներով են ընդունելություն կազմակերպում, որոնք, մեղմ ասած, հաճախ այնքան էլ սերտորեն չեն առնչվում դիմորդի մասնագիտության հետ:

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ա aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 24.05.2012

VIVACELL MTS

# ԷՔԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Գաբրիել Սարգսյանը՝ «Չիկագո օփեն»-ում



Վաղը Ամերիկայում մեկնարկում է շախմատի «Չիկագո օփեն» ավանդական ներկայացուցչական մրցաշարը, որի ընդհանուր մրցանակային ֆոնդն առնվազն $100 հազար է: Մրցաշարի ուժեղագույնների խմբում հանդես է գալու նաեւ մեր հանրապետության ներկայացուցիչ, օլիմպիական չեմպիոն, գրոսմայստեր Գաբրիել Սարգսյանը:

## Պատկառելի կազմով

Հայաստանի շախմատիստները պատկառելի կազմով մասնակցություն են ունենալու Ալբենա քաղաքում մայիսի 26-ին մեկնարկող բաց մրցաշարին:

Մեր հանրապետությունից Բուլղարիայում կպայքարեն օլիմպիական չեմպիոններ Վլադիմիր Հակոբյանը, Տիգրան Լ. Պետրոսյանը, գրոսմայստերներ Հրանտ Մելքումյանը եւ Ավետիք Գրիգորյանը, Նելլի Աղինյանը, միջազգային վարպետներ Կարեն Գրիգորյանը, Հովհաննես Գաբուզյանը եւ Վահե Բաղդասարյանը:

## Նանա Ձագնիձեն համալրել է «Միկայի» կազմը

Վրաստանի եւ աշխարհի ուժեղագույն կին գրոսմայստերներից մեկը՝ Նանա Ձագնիձեն, նոր խաղաշրջանում հանդես կգա Երեւանի «Միկա» ակումբի կազմում, որտեղ կմիանա Հայաստանի առաջատար շախմատիստներ Էլինա Դանիելյանին, Լիլիթ Մկրտչյանին: Մեր կանանց թիմում է նաեւ Հնդկաստանի ներկայացուցիչ ու նույնպես աշխարհի ուժեղագույն շախմատիստուհիներից մեկը՝ Հարիկա Դրոնավալին: «Միկան» պատրաստվում է մասնակցել հոկտեմբերի 10-18-ը Իսրայելի Էյլաթ քաղաքում կայանալիք Եվրոպայի կանանց ակումբային առաջնությանը:



## Օդին ու վիսկին խմել են



տոննաներով

Լոնդոնի՝ ամառային եւ Սոչիի՝ ձմեռային օլիմպիական խաղերը Ռուսաստանի օլիմպիական պատվիրակության բոլոր անդամների, առաջին հերթին՝ ամենաբարձր պաշտոնյաների համար պետք է ոչ ալկոհոլային լինեն:

Մոսկվայի Սպիտակ տնից այսպիսի հրաման արձակվել է 2010 թվականին Վանկուվերում Ռուսաստանի լիակատար ձախողումը հիշելով: Այն ժամանակ դրա համար պաշտոնաթող եղավ Ռուսաստանի օլիմպիական կոմիտեի նախագահ Լեոնիդ Տյագաչովը:

Քչերը գիտեն, որ Վանկուվերում ռուսական նավթային ընկերություններից մեկի կազմակերպած երեկույթի ժամանակ երկու կեղծ բենզալցակայան էր գործել, որոնց լիցքավորման խողովակներից բենզինի փոխարեն առատորեն օղի եւ վիսկի էր հոսում:

## Իտալիա-Հայաստան՝ 2:1

Իտալիայում մեկնարկած ֆուտբոլի Եվրոպայի մինչեւ 19 տարեկանների առաջնության էլիտ ռաունդի առաջին խաղը Հայաստանի երիտասարդական հավաքականն անցկացրեց Իտալիայի իր հասակակիցների հետ եւ պարտվեց 1:2 հաշվով:

Առաջին խաղակեսում դարպասների գրավում չարձանագրվեց, եւ ընդմիջման գնալուց վայրկյաններ առաջ բուլղարացի մրցավար Իվայլո Ստոյանովը երկրորդ դեղին քարտը ցույց տվեց մրցակից թիմի խաղացող Ժերար Դելոֆեին՝ հեռացնելով դաշտից:

Չնայած իտալացիները դրանից հետո պայքարը շարունակեցին տասը հոգով, սակայն շատ ժամանակ չանցած բացեցին հաշիվը: Ճիշտ է, ընդամենը յոթ րոպե հետո փոխարինման ելած Դավիթ Հակոբյանը վերականգնեց հավասարակշռությունը: Թվում էր, թե ամեն բան տանում է հանդիպման խաղաղ եզրափակման, բայց լրացուցիչ ժամանակում իտալացիները խփեցին հաղթական գոլը՝ 2:1: Մեր խմբի մյուս հանդիպումում Իտալիան նույն հաշվով պարտության մատնեց Բելգիային:

## Գելֆանդն ու Անանդը կրկին ոչ-ոքի խաղացին

Շախմատի թագի համար աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդի եւ հավակնորդ Բորիս Գելֆանդի միջեւ Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում ընթացող մրցամարտի իններորդ պարտիան, որում սպիտակներով խաղում էր իսրայելցի հավակնորդ Գելֆանդը, 49-րդ քայլում ավարտվեց ոչ-ոքի: Հաշիվը կրկին հավասար է՝ 4,5:4,5: Տասներորդ պարտիայում սպիտակներով խաղալու է հնդիկ գրոսմայստերը:

Ա. Հ.

## «Հոմոսեքսուալիստների մեծ մասը հոգեկան հիվանդ է»

«Հայացք» ակումբի երեկվա հյուրերն էին Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր սպասավոր տեր Շմավոն քահանա Ղեւոնդյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր, Խ Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի զարգացման եւ կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ Սամվել Խուդոյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Սթրես պլյուս» կենտրոնի ղեկավար, հոգեբույժ Սամվել Սուքիասյանը: Բանախոսները միասեռականությունը ներկայացրին հոգեբանական եւ կրոնական տեսանկյունից:

Սամվել Խուդոյանը նշեց, որ նույնասեռականության որոշ տեսակներ հիվանդություն չեն համարվում, բայց, օրինակ, տրանսսեքսուալիզմը սեռական գիտակցության խանգարում է, անգամ շիզոֆրենիայի դրսեւորում. «Հոմոսեքսուալիստների մեծ մասը հոգեկան հիվանդ է. 25 տարեկանից հետո սկսում են զառանցել, թե իրենք Նապոլեոնն են կամ Քրիստոսը: Նրանք չեն հասկանում իրենց խանգարումը, չեն էլ ամաչում դրանից, իսկ որոշ իրավիճակների դրդմամբ համասեռամոլ դարձածների մեծամասնությունը ուզում է բուժվել»: Խուդոյանը հավելեց, որ առավել վտանգավոր է երեւույթի քարոզչությունը, ինչը հագեցնում է ծնելիության անկման եւ սպառնում ազգային անվտանգությանը. «Հավանականությունը մեծ է, որ նրանց որդեգրած երեխան էլ է համասեռամոլ դառնում»:

Սամվել Սուքիասյանը նշեց, որ հոմոսեքսուալիզմը, որպես հիվանդություն, 1992թ.-ին հանվել է համաշխարհային դասակարգումից՝ պայմանավորված որոշ քաղաքական եւ իրավական նկատառումներով. «Ինչո՞ւ սնդային խանգարման վրա հիմնված ներվային անորեքսիան համարում են հիվանդություն, իսկ սեռական ֆունկցիայի խանգարումը՝ ոչ: «Իսկական» համասեռամոլը ընկնում է միայն հաճույքի ետեւից, իսկ դրդմամբ համասեռամոլ դարձածը՝ զոհ է իրավիճակի եւ գանգատվում է առողջությունից»:

Տեր Շմավոն քահանա Ղեւոնդյանը նշեց, որ համասեռամոլությունը հակաաստվածային եւ մերժելի երեւույթ է, քանի որ Աստված ստեղծել է մարդուն, ապա՝ կնոջը եւ օրհնել նրանց միությունը: «Այդպիսի մարդիկ կարիք ունեն օգնության, պարզապես խուսափում են դիմել եկեղեցուն: Մենք չենք ատում մեղավորին, ով մոլորվել է եւ հիվանդացել»,- ասաց տեր Շմավոնը: Հանդուրժողականության շուրջ հոգեւորականը նշեց, որ մեղքի հանդեպ հանդուրժող չեն լինում եւ չեն քարոզում միասեռականների իրավունքների պաշտպանությունը:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# «Կազինոյում անիմաստ է գաղափարներից խոսելը»

### Հայտարարում է Գարեգին Չուգասզյանը

Երեկ «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ Գարեգին Չուգասզյանը ներկայացրեց «Այլընտրանքային ընտրությունների միջոցով իշխանափոխության եւ նոր Հանրապետության հիմնադրման ճանապարհային քարտեզի» նախագիծը: Չուգասզյանի ձեւակերպմամբ՝ «Չակերտյալ խորհրդարանական ընտրություններն ապացուցեցին, որ վարչախումբը կատարելագործելով ընտրություններ կոչվող գործընթացի կեղծման մեխանիզմները, ոչ մի հնարավորություն չտվեց հասարակությանը՝ դասական միջոցներով իրականացնել իշխանափոխություն եւ նոր համակարգի ձեւավորում: Այդ իսկ պատճառով՝ «անհետաձգելի շրջադարձն այլընտրանքային միջոցներով իրականացնելու անհրաժեշտությունը վաղուց հասունացել է»:

«Սարդարապատի» եւ հասարակության տարբեր անհատների կողմից քննարկումների արդյունքում ստեղծվել է «Այլընտրանքային ընտրությունների միջոցով իշխանափոխության եւ նոր Հանրապետության հիմնադրման ճանապարհային քարտեզ» նախագիծը, ինչը տեղադրված է նաեւ facebook-ում:

Չուգասզյանի փոխանցմամբ՝ ճանապարհային քարտեզի նպատակն է Հայաստանում հասնել լեգիտիմ եւ անցնցում իշխանափոխության. «Գործընթացը պայմանականորեն բաղկացած է լինելու երկու փուլից՝ լեգիտիմության չհավակնող նախախորհրդարանի կազմավորման ու գործունեության փուլից, որի առաքելությունը կլինի մասնագիտական եւ հանրային բաց



մասնակցության ձեւաչափով մշակել, հաստատել ապագա Հայաստանի պատկերացումը: Եվ երկրորդը՝ պետք է կազմավորվի ներկայացուցչության ավելի բարձր աստիճանով ներկայացվող Հիմնադիր խորհրդարանը, որը քաղաքացիների հետ պայմանագրերի ստորագրությամբ ձեռք կբերի ամբողջական լեգիտիմություն եւ կիրականացնի անցնցում իշխանափոխություն»:

Ըստ Չուգասզյանի՝ առաջին փուլը, այսինքն՝ նախախորհրդարանի ստեղծումը, կարելի է նմանեցնել բրիտանական իրականության մեջ գործող ստվերային կառավարությանը, միայն այն իմաստով, որ սա գործում է խորհրդարանից դուրս, այսինքն՝ այս մարմինը չի ձգտում լեգիտիմության, բայց զբաղված է խորհրդարանական գործունեությամբ:

Բանախոսը հավելեց. «Այս նախաձեռնության համար սկզբունքային նշանակություն է ներկայացնում համահայկականության սկզբունքը: Պետական ներկայացուցչական եւ գործադիր մարմիններում պաշտոնավարության պայմանը հայրենաբնակությունն է լինելու: Ես համոզված եմ՝ սա ամենահավանական տարբերակն է Հայաստանում անցնցում իշխանափոխություն իրականացնելու»:

Չուգասզյանի կարծիքով՝ ճանապարհային քարտեզի առաջարկը շատերին կհետաքրքրի, քանի որ առանց գաղափարների հասարակություններ չեն լինում. «Ուրիշ հարց է, որ մեր ընտրական գործընթացները կառուցված չեն գաղափարների վրա: Իսկ եթե մենք ունենանք այլընտրանքային ընտրական պրոցես, որը գաղափարներ կներառի, ապա այնտեղ անպայման հետաքրքրություն կլինի: Իսկ այսօրվա գործող ընտրական պրոցեսները ուրիշ սկզբունքով են կառուցված: Կազինոյում անիմաստ է գաղափարներից խոսել: Բոլոր այն միամիտ ընդդիմադիրները, որոնք կարծում են, թե իրենց օգգ-ն զրոյից բարձր կարող է լինել ներկայիս գործող Ազգային ժողովում, կոչ եմ անում ուշադիր լինել այս այլընտրանքային քաղաքական պրոցեսի նկատմամբ: Կան որոշ ազնիվ քաղաքական գործիչներ, օրինակ՝ Զարուհի Փոստանջյանը, որոնք դեռ հույս ունեն, որ այս Ազգային ժողովում ինչ-որ բանի կարող են հասնել...»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ